ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԻԹ

Գավթի դռան աջ և ձախ կողմերում կանգնեցված խաչքարերի վրա.

474. Աջակողմյանին՝

ԿԱՆԳՆԵՑԱՒ ՍՐ ԽԱՉՍ ՊՐ ՅՈՎԱԿԻՄԻՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ՄԱՐԻԱՄԻՆ ԵՒ ՋԱՒԱԿԱՑՆ ՄԻՆԱՍԻՆ. ԽԱՍՊԷՌԻՆ ԵՒ ԾՆՕՂԱՑՆ ԱԾ ԱՏՐԻՆ ԵՒ ԵԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՂԲԱՐՑՆ ԼՈՑՍՊԱՐՈՆԻՆ ԵՒ ԽԱՉԵՐԵՍԻՆ ԵՒ ՆԻԿՈՂՈՍԻՆ ԵՒ ԼՈՒՍԵՂԷՆԻՆ ԵՒ ԱՅԼ ՋԱՐՄԻՑ: ՁԵՌԱՄԲ ՄԱՐԳԱՐ ԳՐՁԻ. ԹՎԻՆ ՌՃԿԲ (1713):

Հրատ. Ջալալյան, Բ, 466, ե. Շահազիզ, 51

475. Ձախակողմյանին՝

ԿԱՆԳՆԵՑԱՒ Ս. ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՊՐ ՍԻՄԷՕՆԻՆ ԵՒ ՀԱՅՐՆ (ՀՕՐՆ) ՊՐ ՍԻՐԱՄԻՐԻՆ, ՄՕՐՆ ՄԵԼԻՔ Խ[Ա]Թ[ՈՒՆ]ԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ ԵՒ ՋԱՒԱԿԱՑՆ: ԹՎ[ԻՆ]. ՊՁ (1431): ՁԵՌԱԳՈՐԾ Է ՍԻՄԷՕՆ ՎԱՐՊԵՏԻՆ:

ՅԻՇ[ԱՏԱԿ] Է ՔԱՐԽԱՆԱՃԻ ՍԻՄԷ[Օ]ՆԻՆ. ՅՈՒՆՎԱՐԻ ԺԷ (17):

Մանոթ. *Ըստ Ջալալյանի՝ ՅՈՒՆՎԱՐԻ ԺԲ (12):*

Հրատ. Ջալալյան, Բ, 466, ե. Շահազիզ, 51

476. Մարմարե հուշասալեր, *ագուցված դեմառդեմ՝ աջ և ձախ պատերի մեջ.*

Մեկի վրա՝

ԴՊՐԱՏՈՒՆՍ ԱՅՍ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՍ ԿԱՆԳՆԵՑԱՒ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԱՐԴԵԱՄԲ ՋՈՒՂԱՅԵՑԻ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ԻՇԽԱՆ ԱՂԱՅ ՅՕՀԱՆՋԱՆԻՆ ՅԱՆՋՆՋԵԼԻ ԻՒՐ ԵՒ ԿԵՆԱԿՑՈՅՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԳԻՒԼԻՍՏԱՆ ՏԻԿՆՈՋԸ, ՊԱՊՈՒՆ՝ ԳԵՐԱՔ ԱՂԱՅԻՆ ՀԱՆՈՒՄ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԿՆՈՋԸ ԵՒ ԳՍՏԵՐԱՑՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱՋԳԱՅՆՈՑՆ. ՅԱՄԻ ՓՐԿՉԻՆ 1790:

Մանոթ. *ըստ Ջալալյանի՝ ԳԵՐԱՔ:*

Հրատ. Ջալայան, Բ, 466, ե. Շահազիզ, 51

477. Մյուսին՝

ՅՕՐԻՆՈՒԱԾ ՊԱՅԾԱՌ ՅԱՐԿԻՍ ՆՈՐԱՍՔԱՆՉ
ԱՐԱՄԵԱՆՑ ԾԱԳԵԱԼ ՋԻՆՋ ԱՐՔԻՈՅՆ ՃԱՃԱՆՉ
ՈՒՇԻՄ ՅՕՀԱՆՋԱՆՈՒ, ԻՇԽԱՆ ՔԱՋԱԼԱՆՋ.
ՐԱՄԻՆ ԳԷՐԱՔԵԱՆ ՊԱՐԾԱՆՔ ԻՍԿԱՔԱՆՋ:
ՎԵՀԱՓԱՌ ԴՊՐՈՅ ԳԻՏՆՈՅ Ի ԿԱՃԱՌ,
ՀԱԻԱՏՈՅ ԱՄՐՈՅ, ՇՆՈՐՀԱՑ ՎԱՃԱՌ՝
ՍՈՒԼԵԱԼ ՀԱՅԿԱՋԱՆՑ ՀՐԱՒԻՐՄԱՆ ՃԱՌ,
ԴԱՍՈՒՑ ՈՐԲ ՄԱՆԿԱՆՑ ԴԱՀԵԱԿ ԱՆԱՋԱՌ.
ԵԿ ՅՈՅՍ, ԽՐԱԽՈՅՍ ՁՕՆԵ[Ա]Լ ՀԱՄԱՇՈՒՆՉ,
ՓՈՂԵԱ Ի ՀՌՉԱԿ ՀՐՃՈՒԱՆՕՔ ԱՆՆԻՆՉ
ՏԵՆՉԱԼԻ ՎԻՃԱԿ ԵՐԱԽՏԵԱՑՍ ԱՆՋԻՆՉ:

Հրատ. Ջալայան, Բ, 465, ե. Շահազիզ, 51

478. Նոր Նախիջևան քաղաքի հիմնադրման առթիվ կանգնեցրած կոթողի պատվանդանին.

Մի կողմին՝

ԵԿԱՏԵՐԻՆԷ Բ. ԿԱՅՍՐՈՒՀՈՒՆ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՀԱՅԵՐԸ.

Մյուս կողմին՝

ԱՂԵՔՍԱՆԴՐ Գ. ԿԱՅՍԵՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ. 1893 Թ.

Հրատ. ե. Շահազիզ, 52

479.

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆԻ ՄԱՀԱՐՁԱՆԻՆ.

ՄԵՍՐՈՊ ԴԱՎԻԹ ԹԱՂԻԱԴԵԱՆ
ՊԵՐՃ ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆ
ՎՍԵՄ ՔԵՐԹՈՂ, ՄԱՏԵՆԱԳԻՐ՝
ՀԱՆԳԻՍՏ ԱՌՆՈՒ ՅԱՅՍ ԹՈՒԽ ԴԱՄԲԱՆ.
ՁՔԵԶ ՀԱՅՈՑ ԳԻՏՆՈՑ ԿԱՃԱՌ
ՊԱՏՎԱՍԻՐԷ ՄԻՇՏ ՍԻՐԱՎՈՐ,
ԵՎ ՆՈՐ ՋՈՒՂԱ ԵՎ ԿԱԼԿԱԹԱ
ՈՉ ՄՈՌԱՍՑԻՆ ՁՔԵԶ ԻՍՊԱՌ:

Ծանոթ. *Բանաստեղծության հեղինակը Խ. Ավետումյանցն է:*

Հրատ. «Բազմավէպ» 1918, էջ 190, Ս. Գևորգյան,
Հայ վիմագիր բանաստեղծությունը, Երևան, 1989, էջ 326:

480. Եկեղեցու արտաքին սեղանի արևելյան կողմին՝

ՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ ԲԱՐԵԽՕՍԵԱ ԽԱՉԵՐԵՍԻՆ, ՀԱՐԱԿՕԲԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ. ԹԱՒՆ (իմա՝ ԹՈՒԻՆ) ՋԼԹ (1490):

Հրատ. Ջալալյան. Բ, 467

Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Նոր Նախիջևանի հյուսիս-արևմտյան մասում կառուցված առաջին քարաշեն այս տաճարը հիմնադրվել է 1781 թ. մայիսի 2-ին, իսկ շինարարությունից անմիջապես հետո՝ 1783-ին օծվել է ս. Համբարձում եկեղեցու հետ միասին: Այս առթիվ Հ. Արղությանի «Դուքար»-ում նշված է.

«Ի սմին թուոջ (1781) եւ ի մայիսի 2: Օծաւ եւ զՍՐ Համբարձում եւ ՍՐ Նիկողայոս եկեղեցւոյ հիմանց քարինս եւ մեծափառ հանդիսիւ տարեալ ի ՍՐ Աստծին յեկեղեցւոյն, եդաւ ի տեղիս իւրեանց. գոյին եւ բազու�իշխանք ազգին ռուսաց[1]»:

Ս. Նիկողայոս եկեղեցու արձանագրությունները

481. Բեմի ճակատին ագուցված մարմարե հուշասալին.

ԿԱՌՈՒՑԱՒ ՏԱՃԱՐՍ ԱՍՏԱՑԻՆ ՅԱՆՈՒՆ ՍՐՑ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԱՐԴԵԱՄԲՔ ՅՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՕԾՄԱՄԲ ՍՐՑ ԱԹՈՌՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՆՈՒԻՐԱԿ ԵՒ ՌՈՒՍԱՑ ԵՐԿՐԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՒ ՆՈՐ ՔԱՂԱՔԻՍ ՆԱԽԻՋԵՒԱՆԱՅ ՀԻՄՆԱԴԻՐ ՍԱՆԱՀՆԵՑԻ ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԵԾԻՆ ԵԿԱՏԵՐԻՆԷԻ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԱՅՍԵՐՈՒՀՈՅՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍՏԱՑ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՆ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԼԵՆԱՅՆ] ՀԱՅՈՑ: ԹՎԻՆ 1783:

Հրատ. Ե. Շահազիզ, 53

Ս. Նիկողայոսը կառուցված է եղել ս. Աստվածածնի ճարտարապետական հորինվածքով, սակայն ունեցել է ավելի փոքր չափեր: Հայկական ոճ են ունեցել գմբեթն ու զանգակատունը,

---

1 Ե. Շահազիզ, Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք, էջ 52: